ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/03

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.01.2018թ. թիվ 03/26-3/173-18 գրությամբ կոնսորցիումի անդամներ՝ «Երպետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00901742) և «Ատլանտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 7707833200) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.01.2018թ. թիվ 01/61-2 գրության հիման վրա, 10.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «կոնսորցիումի անդամներ՝ «Երպետ» ՍՊԸ-ին և «Ատլանտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 08.01.2018թ. թիվ 01/61-2 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Երպետ» ՍՊԸ-ին և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) (այսուհետ՝ Վաճառող) միջև 23.10.2017 թ. կնքված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/12» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.12.2017թ.:

Պայմանագրի 8.6 կետի համաձայն՝ եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Պայմանագրի 8.14 կետով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետի 22.01.2016թ. N38-Ա կարգադրությամբ ստեղծված մասնագիտական խումբը ս.թ. դեկտեմբերի 15-ին այցելել է արտադրամաս՝ ուսումնասիրելու պատրաստվող տեղեկատվության աջակցության և սասարկման համար նախատեսված կրպակը: Այցի ժամանակ ի հայտ են եկել մի շարք թերություններ, որոնք ներկայացվել են 20.12.2017թ. 04/28276 գրությամբ Վաճառողին (գրությունը փոխանցվել է առձեռն «Երպետ» ՍՊԸ-ի աշխատակից Ա.Վանյանին, նաև ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով erpet.erpet@mail.ru էլեկտրոնային հասցեին):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված գնման առարկայի մատակարարման ժամկետը՝ Երևանի

քաղաքապետարանը ղեկավարվելով Պայմանագրի 2.1.5 կետով, համաձայն որի Գնորդն իրավունք ունի Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, առաջարկել է մինչև 25.12.2017թ. մատակարարել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը և վճարել 6.2 կետով նախատեսված տույժը:

«Երպետ» ՍՊԸ-ի աշխատակից Ա.Վանյանին բանավոր ներկայացվել է մասնագիտական խմբի կողմից մատնանշված թերությունները շտկելու համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը, որը նաև ուղարկվել է վերջինիս էլեկտրոնային հասցեին:

Մասնագիտական խմբի անդամները կրկին այցելել են Վաճառողի արտադրամաս, որտեղ արձանագրել են, որ չնայած ներկայացված թերությունների որոշակի մասի շտկմանը, այնուամենայնիվ, տեղեկատվության աջակցության և սասարկման համար նախատեսված կրպակը ամբողջական տեսք չի ունեցել, բոլոր դետալները և դեկորատիվ էլեմենտները հավաքված վիճակում չեն եղել, նոր մշակման և ներկման փուլում են գտնվել, տանիքն իր բոլոր գրվածքներով և դեկորատիվ էլեմենտներով հավաքված չի եղել, INFO-ի շրջանակը բացակայել է և առհասարակ չի ներկայացվել մասնագիտական խմբի անդամներին, բարձրացված չեն եղել երկաթյա շերտավարագույրները, որպեսզի կրպակի ամբողջական տեսքը տեսանելի լինի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ

պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված ապրանքի մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ՝ Գառնիկ Ամատունյանը և Գոռ Մուրադյանը:

3. <u>«Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Խորհրդին ուղղված 31.01.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Երևանի քաղաքապետարանի և «Երպետ» ՍՊԸ-ի միջև կնքված 23 հոկտեմբերի 2017թ. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով,

ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանգրի հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի՝ տեղափոխումն ու տեղադրումն իրականացվում է համաձայն պատվիրատուի ներկայացված հասցեի:

Ըստ վերոգրյալի, պատվիրատուի կողմից մատակարարման հասցեն պետք է հատկացվի մատակարարին մինչև պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետի ավարտը (ողջամիտ ժամկետում), այսինքն, մինչև 15.12.2017թ., որպեսզի մատակարարը կարողանա մատակարի (տեղափոխի ու տեղադրի) ապրանքը, հակառակ դեպքում մատակարարի կողմից չի կարող մատակարարվի ապրանքը:

Ինչպես մինչև 15.12.2017թ. այնպես էլ մինչև 27.12.2017 թ. պատվիրատուի կողմից չի տրամադրվել մատակարարման հասցե, ուստի մատակարարին չի կարելի մեղադրել ապրանքի չմատակարարման և կամ նրա կողմից ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար:

Պատվիրատուի կողմից մինչև 07.12.2017թ. ներառյալ, ներկայացվել է Պայմանգրի հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրով նախատեսված՝ «վերևի ճակատային հատվածում նպատակահարմար է պատկերել հայկական զարդանախշեր՝ ձուլվածքով, և առկա լինի կրպակի նպատակային նշանակության նկարագրությունը: Տանիքին տեղադրվելու է լուսավորվող վահանակ Φ 500 մմ պատկերված նպատակային նշանակության նշանը: Կրպակի գույնն ու գովազդային տեսքը ըստ պատվիրատուի առաջարկի: Տեղափոխումն ու տեղադրումը համաձայն պատվիրատուի ներկայացված հասցեի», անհրաժեշտ տեղեկությունները, ձևը և այլն, որոնց համապատասխան էլ կառուցվել է կրպակը՝ տեղադրվել է զարդանախշեր՝ ձուլվածքով, կրպակի նպատակային նշանակության նկարագրությունը, նպատակային նշանակության նշանը, կրպակի գույնն ու գովազդային տեսքը, իսկ 08.12.2017թ. մինչև 10.12.2017թ. ընկած ժամանակահատվածում այն սկսել են փոփոխել, որը ևս կատարվել է:

Մինչև 15.12.2017թ. կրպակի պատրաստման արտադրամաս բազմիցս այցելել են պատվիրատոյի աշխատանքնային խումբը, ներկայացուցիչներ (Գառնիկ Ամատունյան,

Տիգրան Ամյան, Մարիա Բարաղամյան և այլն), որոնց կողմից ոչ մի անգամ թերություններ, բացթողումներ, տեխնիկական բնութագրին ոչ մի անհամապատասխանություններ չեն արձանագրվել և չեն բարձրաձայնվել:

Բոլորը կատարված է եղել պատվիրատուի պահանջներին համապատասխան:

Կրպակի գույնը բանավոր համաձայնեցված է եղել պատվիրատուի հետ, և մեկ նմուշ էլ ներկված փոքր դետալի վրա ներկայացվել է պատվիրատուին համաձայնեցման նպատակով, որին տվել են համաձայնություն, ինչպես նաև տեխնիկական բնութագրով նախատեսված մնացած պահանջները պատվիրատուն ներկայացրել է էլ. փոստի միջոցով:

Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամետի ավարտի օրը՝ 15.12.2017թ. օրվա վերջում աշխատանքային խումբը և Քաղաքապետի խորհրդական, Երևանի Գլխավոր դիզայներ Գ.Ամատունյանը այցելել են արտադրամաս: Միայն 21.12.2017թ. ստացել ենք գրություն, որտեղ նշվել են նոր պահանջներ և նոր լուծումներ, որոնք չեն բխել պայմանագրից:

Ելնելով վերոգրյալից՝ պարզ է դառնում, որ պատվիրատուն ցուցաբերել է կամայականություն, խտրականություն, կատարել է միտումնավոր քայլեր՝ պայմանագրի կատարումը ձախողելու համար:

Ուստի պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծումը անհիմն է, անօրինական, ապօրինի:

Միաժամանակ նշեմ, որ «Երպետ» ՍՊԸ-ի կողմից պատվիրատուին ուղղված ոչ մի գրությանը պատվիրատուն չի պատասխանել»:

Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էր «Երպետ» ՍՊԸ-ի տնօրեն Երվանդ Պետրոսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/03 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2018թ. թիվ 03/26-3/173-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 08.01.2018թ. թիվ 01/61-2 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Երպետ» և

«Ատլանտ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 23.10.2017թ. կնքված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/12» ծածկագրով գնման պայմանագիրը, «Երպետ» ՍՊԸ-ի Խորհրդին ուղղված 31.01.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «Երպետ» ՍՊԸ-ին ուղղված Երևանի քաղաքապետարանի 27.12.2017թ. թիվ 81/1213 գրությունը, Երևանի քաղաքապետի խորհրդականի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին ուղղված 26.12.2017թ. թիվ 04/28818 գրությունը.

Երևանի քաղաքապետարանի և «Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների միջև 23.10.2017թ. կնքվել է «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/12» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

• 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

• 2.1.5 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը:

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մինչև Պայմանագրի կատարման վերջնաժամկետը՝ 15.12.2017թ., Գնորդին մատակարարել տեղեկատվության աջակցության և սպասարկման համար նախատեսված կրպակի ձեռքբերում (տեղադրումով)՝ հետևյալ տեխնիկական պարամետրերով.

«Կրպակը բաղկացած է 8 կողմից և ունի 1 դուռ, տաղավարի ընդհանուր եզրագիծը տեղավորվում է 3600x3600 մմ քառանկյան մեջ: Կրպակի կմախքը պատրաստված է մետաղական ուղղանկյան և կլոր խողովակներից ամրացված եռակցման միջոցով: Բարձրությունը 3մ է, իսկ ապակու բարձրությունը 2.3մ (առանց գովազդային վահանակի): Վերևի ճակատային հատվածում նպատակահարմար է պատկերել հայկական զարդանախշեր՝ ձուլվածքով, և առկա լինի կրպակի նպատակային նշանակության նկարագրությունը: Բոլոր կողմերը և դուռը ապակեպատ, ապակիները ամրացված են ալյումինե պրոֆիլներով: Ապակիների արտաքին մասից հարկավոր է տեղադրել ալյումինե էլեկտրական շարժիչով պաշտպանիչ շերտավարագույրներ: Կրպակը պետք է ունենա 2 պատուհան՝ սպասարկման համար: Կրպակի տանիքը, պատերը և հատակը պետք է լինեն ջերմամեկուսացված: Տանիքին տեղադրվելու է լուսավորվող վահանակ Φ 500 մմ պատկերված նպատակային նշանակության նշանը: Հատակը պետք է լինի լամինատե: Կրպակի գույնն ու գովազդային տեսքը՝ ըստ պատվիրատուի առաջարկի: Կրպակը ամբողջությամբ պետք է լինի մետաղական, ջերմամեկուսացված, տանիքը թիթեղյա ծածկով (գույնը պատվիրատուի առաջարկով): Նախաներկում, ներկում: Տեղափոխումն ու տեղադրումը համաձայն պատվիրատուի ներկայացված հասցեի»:

«Երպետ» ՍՊԸ-ն 15.12.2017թ. թիվ 01-01/15.12 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետի խորհրդականին՝ տեղեկացնելով, որ պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու նպատակով Ընկերության կողմից Պատվիրատուի հետ քննարկվել են կրպակի կառուցմանը և արտաքին ձևավորմանը վերաբերող հարցերը, ընդունվել են Պատվիրատուի կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ 15.12.2017թ. դրությամբ պատվիրատուի կողմից չի տրամադրվել կրպակի տեղադրման

հասցեն, և խնդրել տրամադրել նշված հասցեն, ինչպես նաև երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը:

Պատվիրատուն 20.12.2017թ. թիվ 04/28276 գրությամբ դիմել է «Երպետ» ՍՊԸ-ին և հայտնել, որ Երևանի քաղաքապետի 22.01.2016թ. N38-Ա կարգադրությամբ ստեղծված մասնագիտական խումբը 2017թ. դեկտեմբերի 15-ին այցելել է արտադրամաս՝ ուսումնասիրելու պատրաստվող տեղեկատվության աջակցության և սպասարկման համար նախատեսված կրպակը: Պատվիրատուն մատնանշել է այցի ժամանակ ի հայտ եկած մի շարք թերություններ, մասնավորապես՝ կրպակի գույնը չի համապատասխանում պատվիրատուի կողմից նշված գույնին, ֆասադի վերին թիթեղն անհարթ է, զոդման աշխատանքներն իրականացված են թերի, տառերի փորվածքն անորակ է և չի համապատասխանում նախապես առաջարկված էսքիզին, կրպակի ներսը ջերմամեկուսացված և երեսպատված չէ, INFO-ի նշանի շուրջը պետք է լիներ շրջանակ, որը բացակայում է, ապակիները տեղադրված չեն և այլն:

Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է Ընկերությանը, որ թեև կոնսրցիումի կողմից խախտվել են Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները, սակայն Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.5 կետով, առաջարկել է ապրանքի մատակարարման նոր վերջնաժամկետ սահմանել 25.12.2017թ.՝ նախազգուշացնելով, որ մինչև նշված ժամկետի ավարտը ապրանքը չմատակակարելու դեպքում Պատվիրատուի կողմից կոնսորցիումի նկատմամբ կկիրառվեն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ ընդհուպ մինչև Պայմանագրի միակողմանի լուծումը և դրանից բխող հետևանքները:

Երևանի քաղաքապետի խորհրդականը քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին ուղղված 26.12.2017թ. թիվ 04/28818 գրությամբ ի թիվս այլոց հայտնել է, որ կոնսորցիումի կողմից խախտվել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի խնդրել է տալ համապատասխան ընթացք՝ ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Երպետ» ՍՊԸ-ի տնօրենը նշեց, որ թեև կոնսորցիումի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում ընդունվել են կրպակի կառուցմանը և

արտաքին ձևավորմանը վերաբերող բոլոր դիտողությունները և առաջարկները (գույնի, զարդանախշերի, գովազդային տեսքի, և այլնի հետ կապված), այդուհանդերձ, պայմանագրի կատարման ժամկետի ավարտից հետո պատվիրատուի ներկայացուցչի կողմից ներկայացվել են այնպիսի պահանջներ, որոնք չեն բխել Պայմանագրից և լրացուցիչ աշխատանքի ծավալ են ստեղծել Ընկերությունների համար: Ընդ որում, ըստ «Երպետ» ՍՊԸ-ի տնօրենի, մասնագիտական խմբի այցերի ժամանակ վերջինիս ներկայացուցիչների կողմից գրավոր ձևով որևէ անհամապատասխանություն կամ թերություն չի արձանագրվել:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ 15.12.2017թ. դրությամբ պատվիրատուի կողմից Ընկերություններին չի տրամադրվել կրպակի տեղափոխման և տեղադրման հասցեն, թեև նշեց, որ հիշյալ հասցեի չտրամադրումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Ընկերությունների կողմից կրպակի կառուցման և արտաքին ձևավորման աշխատանքները չէին հասցվել ավարտին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նույն Պայմանագրով նախատեսված ապրանքի տեղափոխումն ու տեղադրումը պետք է իրականացվեր համաձայն պատվիրատուի ներկայացված հասցեի, մինչդեռ 15.12.2017թ. դրությամբ Պատվիրատուի կողմից վերը նշված հասցեն Ընկերություններին չի տրամադրվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի մասնագիտական խմբի կողմից մատնանշվել են մի շարք անհամապատասխանություններ այնպիսի պայմաններին, որոնք սահմանված չեն եղել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (օրինակ՝ զոդման աշխատանքների որակին, տառերի փորվածքին և դիզայնին, ապակիների ոչ ամբողջական լինելուն և այլնին վերաբերող դիտողություններ), ուստի նշված անհամապատասխանությունները չէին կարող որակվել որպես Պայմանագրի էական խախտում, հետևաբար, չէին կարող հիմք հանդիսանալ Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու համար: Ընդ որում, Պատվիրատուի կողմից նշված դիտողությունները ներկայացվել են բանավոր կարգով՝ աշխատանքների որակի վերաբերյալ որևէ գրավոր արձանագրություն կամ եզրակացություն վերջինիս կողմից չի կազմվել և Ընկերություններին չի ներկայացվել:

Խորհուրդը գտնում է, որ «Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից մինչև պայմանագրային պարտավորությունների կատարման համար սահմանված նոր վերջնաժամկետը՝ 25.12.2017թ., օբյեկտիվորեն չէին կարող իրականացվել Պատվիրատուի կողմից մատնանշված թերությունների շտկման աշխատանքները՝ ողջ ծավալով:

Խորհուրդը գտնում է նաև, որ Երևանի քաղաքապետարանը «Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հետ 23.10.2017թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշում ընդունելով՝ խախտել է Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Երպետ» և «Ատլանտ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2018թ. գրությամբ կոնսորցիումի անդամներ՝ «Երպետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00901742) և «Ատլանտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 7707833200) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**